



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ 4-61-92

Fax 2-28-77

թիվ _____

« ____ » _____ 2015թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Ձեր 16.07.2015թ. թիվ 1/06.3/9870-15 հանձնարարականի.

Հարգելի պարոն Երիցյան

ՀՀ կառավարության «Խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» որոշման նախագծը քննարկվել է համապատասխան ստորաբաժանման մասնագետների, ինչպես նաև խնամք իրականացնող հաստատությունների տնօրենների հետ: Ձեզ եմ ներկայացնում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ:

Առդիր 1էջ:

ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ա Ռ Ա Զ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

- 2-րդ գլխի 11-րդ կետի <<խաղասենյակներ>> բառից հետո ավելացնել << և մասնագիտական թիմ՝ առկա գնահատված երեխաներին ըստ կարիքների մասնագիտական ծառայություններ մատուցելու համար>> բառերը:
- 3-րդ գլխի 14-րդ կետի << ոչ ուշ քան մեկ օրվա ընթացքում>> բառերը փոխարինել << մեկից երեք օրվա ընթացքում >> բառերով:
- 3-րդ գլխի 14-րդ կետի <<դեպքում>> բառից հետո ավելացնել <<համագործակցելով այլ իրավասու կառույցների հետ>> բառերը:
- 3-րդ գլխի 18-րդ կետի <<հնգօրյա ժամկետում>> բառերից հետո ավելացնել <<համագործակցելով համապատասխան իրավասու մարմինների հետ>> բառերը:
- 3-րդ գլխի 19-րդ կետի 1-ին մասի << հաշվառումը՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա>> ձևակերպումը փոխարինել << հաշվառումը՝ որպես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխա>> ձևակերպմամբ:
- 3-րդ գլխի 19-րդ կետի 2-րդ մասի վերջում ավելացնել <<երե փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարգվի, որ սույն կարգի 16,17,18 կետերով սահմանված փաստաթղթերը լիարժեք չեն, մարզպետարանը իրավասու է կատարել լրացուցիչ ուսումնասիրություն՝ համագործակցելով վերոնշյալ կետերում նշված մարմինների հետ:
- 5-րդ գլխի 63-րդ կետի վերջում << խնամակալության և հոգաբարձության մարմին>> բառերից հետո ավելացնել <<և գործակալության համապատասխան դեպք վարողին>> բառերը:
- 64-րդ կետի <<վերաուղեգրման միջոցով>>բառերից հետո ավելացնել <<այդ մասին ի գիտություն պահելով մարզպետարանին և գործակալությանը>> բառերը:
- 70-րդ կետի <<և ժամկետում>> բառերից հետո ավելացնել <<երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ներկայացուցչի հետ>>բառերը:
- 107 կետը թողնել որպես 1-ին մաս, իսկ որպես 2-րդ մաս ավելացնել <<Կենտրոնը երեխային տրամադրող խնամքը դադարելուց հետո այդ մասին գրավոր տեղյակ է պահում երեխայի փաստացի գտնվելու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին և մարզպետարանին/Երևանի քաղաքապետարանին/>>:
- 108 կետի <<իրականացման շրջանակներում>> բառերից հետո ավելացնել <<պարտավոր են համագործակցել>> բառերի հետ: